

Հրաշյա Մանուկյան

Վերևից ամեն ինչ երևում է

Վերևից ամեն ինչ երևում է .

ճանապարհը, որով մի մարդ է անցնում,
երկաթից կմախքները՝ կյանքից դուրս քշված,
ինձ նայող տասնյակ քառակուսի աչքեր
ու մի դուռ կիսաբաց:

Դուրս եկավ դռնից մի կին՝ մազերը ներկած,
զարմացա . . . երեխա էր, երբ անցյալ
անգամ տեսա,
վերև չնայեց, դուռը կողպեց ու գնաց,
իսկ ես ներս մտա:

Երբ նորից նայեցի ներքև,
ճանապարհով անցնում էր մի տատիկ ալեհեր,
անձանոթ էր. ուզեցի հետևել, թե ուր է գնում,
իսկ նա մոտեցավ դռանն այն նույն,
բայց չթակեց . . . բանալին հանեց, բացեց
ու մտավ ներս:

Ցավերն ունեն կենսագրություն

Ցավերն ունեն կենսագրություն՝
ծնունդ, տարիք, մահ կամ անմահություն,
ունեն ծնող կամ ծնողներ՝ իրար սիրող
կամ ուղղակի անձանոթներ:

Փոքրիկ ցավին շատ բան պետք չէ՝
տուն, ընտանիք, ուշադրություն,
խաղալիքներ սրտի տեսքով՝
մի քիչ փափուկ, մի քիչ սեղմվող,
մի մահճակալ, կաշվե ներքնակ
ու մի քանի կողպված դարակ:

Ցավը՝ արդեն մի քիչ հասուն,
ուզում է լինել ինքնուրույն,
պահանջում է՝ դուրս թողնեն իրեն.
միևնույն է, գալու է տուն,
բայց ծնողը զսպում է ցավին.
հանգիստ մնա, նստի՛ր տանը,
կուղարկե՛մ դպրոց, որտեղ
տնօրեն է հոգեբանը:

Ենթարկվում է ծնողին ցավը
կամ էլ փախչում է՝ չդիմանալով
իր անազատությանը,
գտնում է ծանոթ-բարեկամներ,
խնդրում օգնություն,
մինչև մի օր կունենա լրիվ անկախություն,
կհասնի ինքն էլ փառքի, ճանաչման,
ինչպես Ռոմեոյի ու Ջուլիետի
ցավն անմահական.

միթե բոլոր ցավերը դրան չեն ձգտում՝
ունենալ հիշվող կենսագրություն:

Քչերն են, սակայն, գտնում անմահությունը,
ավելի հաճախ ողբերգությամբ է
ավարտվում ցավի կենսագրությունը,
խեղդամահ է անում ծնողը զավակին,
թաղում է տանը, որ չիմանան
իր հանցանքի մասին,
այրում է իրերը, մաքրում հետքերը,
բայց մենության մեջ երբեմն
գալիս են հիշողությունները՝
տրորված կաշվե ներքնակի,
կոշտացած սրտաձև խաղալիքների
ու կիսաբաց դարակների:

Ես քեզ սիրում եմ

Ես նրան հարվածեցի,
նա համբուրեց ձեռքս,
Ես նրան հրեցի,
նա ինձ գրկեց,
Ես նրան ասացի՝ ինչ հիմարն ես,
նա ինձ ասաց՝ ես քեզ սիրում եմ:
Ես դուրս եկա տնից,
նա ինձ զանգեց,
հեռախոսն անջատեցի,
հաղորդագրություն գրեց,
եկա կեսգիշերին,
նա դեռ սպասում էր,
հետը չխոսեցի,
նա լուռ հետևում էր,
մեջքով պառկեցի,
մեջքս շոյեց,
ձեռքին խփեցի,
վրաս ծածկեց,
Ես քնեցի,
իսկ նա դեռ արթուն էր:

Երազ տեսա .

վայրենիների մեջ էի,

բոլոր կողմերից

հարձակվում էին,

վախեցած գոռում էի,

ուզում էի փախչել .

նա ինձ արթնացրեց .

«Ես քեզ սիրում եմ»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մարդը շունի հարթ մակերես	7
Ցավերն ունեն կենսագրություն	9
Բադիկը	11
Կովում միշտ կա քաժանող	13
Կենդանի հայացք.....	14
Արդյոք պե՞տք են մեր հիշողությունները.....	18
Ժամանակը	20
Ժառանգականություն.....	21
Մի քիչ թույն	23
Մեր մեջ ամեն ինչ կա.....	26
Ծխելու խոտը.....	28
Կորածը.....	30
Սև ու մութ քառակուսի.....	33
Հին մտածողները	35
Առցանց մարդը	37
Տունը	38
Գրելու պահանջ	40
Աշունը.....	41
Կարճատես հրաձիգը	42
Դիմացի մայթից.....	43
Տղամարդկություն	45
Բաժանում	46
Սպիտակ մազը	48

Վերևից ամեն ինչ երևում է	49
Կյանքի բույրը.....	50
Պահպանման օրենքը	52
Ես չեմ աստուծում.....	54
Ընկերություն.....	55
Շունչը	56
Ներաշխարհ	58
Պոեզիա	60
Տերմինների լեզուն	62
Շնորհակալություն	64
Լռություն.....	66
Տիեզերքը	68
Երկիրն է մեղավոր	69
Հիմարության սանդղակ.....	70
Գիտակից հասարակություն	72
Մարդը ոտաբոբիկ	73
Որքա՛ն շատ ենք մեր փոքրիկ մարմնում	75
Կնոջս	78
Ես քեզ սիրում եմ	79
Նախավերջինը	80
Վերջաբան	81

Ինչո՞ւ սկսեցի բանաստեղծություն գրել

12 տարեկանում առաջին անգամ ինձ տեսա հեռուստացույցով (1996 թվականն էր): Դասընկերուհուս քույրն աշխատում էր հեռուստաընկերությունում, ու դասընկերուհիս տանը պատմել էր, որ իր դասարանից մի տղա բանաստեղծություններ է գրում, նույնիսկ գիրք ունի: Գիրքն ինքս էի պատրաստել (նկարը տես ներքևում) ու վերնագրել էի՝ «Կյանքը»: Մեր տուն եկան «Էջմիածին» հեռուստաընկերության երկու աշխատակից ու ինձնից հարցազրույց վերցրին: Լրագրողը հարցրեց, թե ինչու եմ ընտրել հենց այդ վերնագիրը: Ես պատասխանեցի, որ բանաստեղծությունները կյանքի մասին են: Իրականում դա անգիտակից պատասխան էր, քանի որ ինչ թեմայով էլ գրես՝ կարող ես ասել՝ կյանքի մասին է:



Այդ տարիքում բանաստեղծություն գրելն ինքնաբերական էր ստացվում: Չգիտեմ՝ ինչու էի գրում: Չկար ինձ ոգեշնչող գրող, չէի երագում բանաստեղծ կամ հայտնի դառնալ, գրականությունը սիրածս առարկաներից չէր: Դպրոցում գերազանցիկ էի, բայց կարդում էի հիմնականում այն, ինչ հանձնարարում էին (գեղարվեստական գրականության հանդեպ շատ խանդավառ չէի):

Այդ տարիքում «ամենահայտնի» գրածներս հումորային բանաստեղծություններն էին: Մեկը սկսվում էր հետևյալ տողերով.

*Հայրս ունի ընկերներ՝
մեկը մեկից շատակեր. . .*

Երբ հորս ընկերների մոտ սա արտասանում էի, ծիծաղից թուլանում էին (դպրոցիս տնօրենը, որ հորս ընկերն էր, իմ ավարտական երեկոյի ժամանակ ժպտալով կարդաց այս տողերը): Հայրս մահացավ, երբ ես 32 տարեկան էի: Այդ ինքնաշեն գիրքս նրա մարմնի հետ հողին հանձնեցի (ինձ համար դա խորհրդանշում էր անցյալով չապրելը), ու մնացին միայն այս երեք բանաստեղծությունները (թողել եմ անփոփոխ).

Գիշերային կյանք

Վառ երազի մեջ ընկած,
Անհոգ պառկած էի քնած,
Պարզգամբուն բացօթյա,
Մեկ էլ հանկարծ արթնացա:

Դեռ փայլում էր սարդը շողեր,
Քամին երգում գաղտնի երգեր,
Ու դուրս եկավ քնքուշ լուսին,
Բույր փարածեց շուշան փոշին:

Չմեռ

Չմեռվա կեսին, սառնամանիքին,
Թափվում էր ձյունը մեր փան փանիքին,
Փռել էր ձմեռը իր լայն թևերը,
Պարում էին օդում ձյան փաթիլները:

Իմ կյած եղբայր Տիգրանը

Իմ կյած եղբայր Տիգրանը,
Շար է սիրում թարմ թանը,
Վզից գցես պարանը,
Չի մոռանա իր թանը:

Հայրս ստում է Տիգրանիկ,
Իմ անուշիկ լավ բալիկ,
Գնա ճարի քեզ կնիկ,
Հեղոն իմի թան մի տիկ:

*Տիզրանն ասաց այ հայրիկ,
Ինչ եմ անում ես կնիկ,
Լավ է խաղանք տունտունիկ,
Հետո ուրենք պրապրիկ:*

Բանաստեղծություն դադարեցի գրել երևի յոթերորդ դասարանում: Դրանից հետո քսանվեց տարի (մինչև 2024 թվականը) գեղարվեստական գրականության հետ չեմ առնչվել, իսկ դպրոցում սովորածը մեծամասամբ մոռացել էի:

Հետկրթական կյանքում ինձ համար շրջադարձային էր 2009 թվականը (25 տարեկան էի): Դա գիտակցական վերածննդի մի շրջան էր, երբ անվստահ պատանին հավատաց իրեն ու որոշեց, թե կյանքում ինչ է ուզում: Այդ տարիներին ակտիվ ընթերցող էի: Կարդում էի հաջողակ մարդկանց ինքնակենսագրություններ, բիզնես գրականություն, հոգեբանություն, փիլիսոփայություն և այլն: Դա մեծ թափ հաղորդեց իմ գիտակցության զարգացմանը: Ամենօրյա ինքնակատարելագործումը դարձավ կենսակերպ: Անձնային աճի թեմայով մի քանի գիրք եմ գրել, որոնք արդյունք են ոչ թե շատ կարդալու, այլ սեփական փորձի ու շատ մտածելու:

2024 թվականի հունվարին կոնջս ու երեխաներիս համար մի անավարտ տեքստ էի կարդում, որ գրել էի մոտ տասներկու տարի առաջ:

«Տարբեր ճանապարհներ»-ը վեպ է մանկության ընկերների մասին, որոնց ճանապարհները դպրոցից հետո բաժանվում են . մեկը գաղթում է ԱՄՆ, զբաղվում բիզնեսով ու հարստանում, իսկ մյուսը կորցնում է աշխատանքն ու մուրացկան դառնում Ֆրանսիայում: Նրանք պատահաբար հանդիպում են ծեր տարիքում ու պատմում են, թե ինչպես է դասավորվել իրենց կյանքը:

Կինս հետաքրքրությամբ լսում էր: Երբ վերջացրի, ասաց . *«Շատ լավն է, ինչի՞ չես շարունակում»*: Դա գիտակցության կտրուկ փոփոխության պահ էր, երբ գեղարվեստական գրականություն գրելը մի ակնթարթում դարձավ իմաստալից (եթե նախորդ օրն ինձ ասեին, որ գեղարվեստական գիրք եմ գրելու, կմտածեի, թե ասողն ինձ ընդհանրապես չի ճանաչում): Սկսեցի ակտիվ ուսումնասիրել, թե ինչ գրողներ կան, ինչ գրքեր են գրել, ինչու է մի գիրքը համարվում լավը, մյուսը՝ վատը: Մի քանի ամսում գրական ոլորտի մասին ընդհանուր պատկերացում կազմեցի: Ունեի մտքեր, որ ուզում էի վեպի վերածել: Ամեն առավոտ մի քանի ժամ գրում էի: Զուգահեռ շարունակում էի ինքնակրթվել գրականության ոլորտում:

2024 թվականի հոկտեմբերին գրական հաղորդում էի դիտում, որի ընթացքում կարծիք հնչեց, թե պոեզիան ավելի բարձր մակարդակի ժանր է, քան արձակը (մինչ այդ ուսումնասիրում էի միայն արձակը): Դա շշմեցնող էր: Ինչպես կարող է բանաստեղծությունը (որ երեխան էլ կարող է գրել) ավելի բարձր մակարդակի ստեղծագործություն համարվել, քան վեպը (որ հաստատամեն մեկի խելքի բանը չէ): Սկսեցի ուսումնասիրել պոեզիան: Կարճ տեքստով խորը իմաստ արտահայտելն ինձ միշտ գրավել է: Անձնային աճի ոլորտում էլ փորձում եմ պարզ, կարճ, բայց իմաստալից ձևակերպել մտքերս: Որոշեցի ընդմիջել վեպս («Երեք մահացած կանայք») ու բանաստեղծություններ գրել:

«Պոեզիա. կենդանացում» գրքում ընդգրկված է յոթ ամսում գրված 44 բանաստեղծություն: Դրանք արտահայտում են իմ կենսակերպը, համոզմունքներն ու փիլիսոփայական հայացքները: Ես գրում եմ այն, ինչ ապրել եմ, զգացել, ինչին հավատում եմ: Ինձ չեն հետաքրքրում գեղեցիկ տեքստերը, որոնցում չկա այնպիսի իմաստ, որի մասին կուզես մարդուն դեմ առ դեմ պատմել (առօրյա՝ ոչ գրական լեզվով): Օրինակ՝ ինձ դուր չեն գալիս 12 տարեկանում գրված իմ բանաստեղծությունները, որոնք, կարելի է ասել, ոչնչի մասին են:

Գրական ստեղծագործության մեջ ինձ համար ամենակարևորը բովանդակությունն է, իսկ մնացածը՝ հանդերձանք: Բանաստեղծության մեջ ես փորձում եմ չօգտագործել «գրական» ծանր բառեր, խճճող հնարքներ: Բանաստեղծության ձևը, ուղղանկյունը, երաժշտականությունը պետք է լրացնեն բանաստեղծության իմաստն ու ենթարկվեն դրան, ոչ թե իշխեն: Ինձ համար բանաստեղծը մտածող է: Նրա ստեղծագործությունը պետք է մնա արժեքավոր ու ազդեցիկ, նույնիսկ եթե զրկվի հանդերձանքից:

Պատվիրել գիրքը



<https://selfhelp.am/poetry/>

